

ՆԵՂՈՒԹԵԱՆ ՊՍԱԿԸ

Գոհութիւն յայտնենք Աստուծոյ ամէն բանի մէջ. ե՛լ նեղութեան, ե՛լ հանգիստի, որովհետեւ երկուքն ալ օգտակար են արդարներուն եւ մեղաւորներուն համար: Պօղոս եւս, որուն ո՛չ ոք կրնար նմանիլ, նեղութեամբ անցուց իր կեանքը: Եւ որովհետեւ զայն շահ կը նկատէր եւ ո՛չ վնաս, անոր համար կ'ըսէ. «Ամէն անոնք, որոնք կ'ուզեն Գրիստոսով աստուածաշտութեամբ ապրիլ, պիտի հալածուին եւ նեղութիւն կրեն» (Բ. Տիմ. Գ.12): Արդարեւ, առաքիւնութեան նամբէն գացող մարդը չի կրնար առանց վիշտի եւ նեղութեան ըլլալ:

Երբ Յոբ, իր ժամանակ, մարդու կեանքը երկրի վրայ փորձութիւն է, կ'ըսէր, ո՞րչափ աւելի է հիմա եւ կամ՝ ապագային: Կրնա՞յ մէկը պատերազմի մէջ ըլլալ եւ հանգիստ փնտռել. արդ, քանի որ նեղութիւններն ու փորձութիւնները այս աշխարհի պատերազմներն են, հիմա հանգիստի ժամանակ չէ, այլ՝ քրտինքի: Ինչպէս որ ըմբիշները նախ կը մերկանան, կ'օծուին եւ ապա կը կոուին, նոյնպէս դուն, որ Աւագանով մերկացար եւ լուացուցար ու միւռոնով օծուցար, պէտք է կոուիս: Եթէ հանգիստ կը փնտռես, ինչո՞ւ մերկացար եւ կոուի պատրաստուցար: Նեղութիւնը բոլորին համար է, ե՛ւ արդարները ե՛ւ մեղաւորները կը չարչարուին, սակայն տարբեր ձեւերով: **ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐ՝ ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՒՈՐՑԻ**

Չգուշանանք սխալ դատողութիւնները

Մեր սխալ դատողութիւններն ու ենթադրութիւններն են, որ մարդիկը մեզմէ կը հեռացնեն եւ մեզ՝ մարդոցմէն: Կրնայ մէկը բարի իմաստով ու բարի նպատակով խօսք մը ըսել կամ գործ մը կատարել, մենք սակայն կրնանք զայն սխալ հասկնալ կամ անոր ըրածը սխալ թարգմանել: Որքա՞ն կարելոր է սիրով եւ հաշտութեան ոգիով լեցուն սիրտ մը ունենալ: Նման սիրտ ունեցող մարդը սխալ մեկնութեան չ'ենթարկեր այն ինչ որ ճիշդ ու բարի նպատակով կը կատարուի կամ կ'ըսուի: Դրական հոգիով ըսուած խօսք մը երբ բացասականօրէն կը հասկնանք կը նշանակէ, թէ դառնութեան հոտ մը կայ մեր ներսիդին, որմէ պէտք է ձեռքազատիլ: Երբ անձ մը կատարուած ամէն արարք եւ ըսուած ամէն խօսք ժխտականօրէն կը հասկնայ՝ կը նշանակէ, թէ այն անձը երբեք ներքին խաղաղութիւն չի վայելեր:

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak ճրագ թերթ](#)



ԺԱ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 ԹԻԻ 51

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԵՐ
Ես.40.18-31: Երբ 4.16-5.10:
ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 18.9-14

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, ու միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզի՝ որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անհիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ մեղաւորիս մեղքերը»: Կ'ըսեմ ձեզի, եզրակացուց Յիսուս, ո՛չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

«Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»: Այս բառերը արտասանելով մաքսաւորը արդար գնաց իր տունը: Մենք եւս սիրելի ընթերցող մեր միակ խնդրանքը, որ պէտք է բարձրացնենք առ Աստուած՝ մեր մեղքերուն ներում եւ անձերու փրկութիւն է: Աստուած ամէն ինչ տուած է մեզի եւ միշտ կը հոգայ մեր պէտքերը: Ապրինք քրիստոնէական կեանքը առանց հպարտանալու՝ խոնարհութեամբ եւ խոհեմութեամբ, այն ատեն Աստուած ինք պիտի բարձրացնէ մեզի:

**ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՃԱՇՈՒ
ԸՆԹԵՐՅՈՒՄԸ**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՍԱԿԸ
ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ
4.16- -5.10**

Այսուհետև համարակարգված մատենանքի Աստուծոյ աթոռին, որորմութիւն եւ շնորհիք գտնելու համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան պարագային:

Արդարեւ, ամէն քահանայապետ որ մարդոց մէջէն կ'ընտրուի, պաշտօն ունի մարդոց կողմէ Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ մտնելու եւ անոնց մեղքերուն համար նուէրներ եւ գոհ մատուցանելու: Եւ որովհետեւ ինքն ալ մարդ է, կրնայ հասկնալ մարդոց տգիտութիւնն ու փորձութիւնները եւ կարեկցիլ անոնց, քանի ինք եւս նոյն տկարութիւնները ունի: Անոր համար է, որ ինչպէս ժողովուրդին՝ այնպէս ալ իր սեփական մեղքերուն համար պէտք է գոհ մատուցանէ:


Գիտէ՞ք նաեւ, թէ ոեւէ մէկը չի՛ կրնար ինքն իրեն քահանայապետութեան պատիւը առնել, այլ՝ Աստուած է որ զայն այդ պաշտօնին կը կանչէ, ու ինչպէս Ահարոն կանչուեցաւ: Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն իրեն չառաւ քահանայապետութեան պատիւը, այլ զայն ստացաւ Աստուծմէ, որ իրեն ըսաւ. «Դուն իմ սիրելի Որդիս ես, այսօր քեզ ծնայ», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Դուն յաւիտեան քահանայ ես, Մեկիսեդեկ քահանային պէս»:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար զինք մահուրնէ փրկել: Եւ Աստուած զինք լսեց, որովհետեւ խոնարհ էր ան եւ հնազանդ: Թէեւ աստուածորդի էր, բայց իր չարչարանքներու փորձառութեամբ սորվեցաւ թէ ի՛նչ բան է հնազանդութիւնը: Եւ այսպէս կատարեալ ըլլալէ ետք, յաւիտեանական փրկութեան պատճառ եղաւ բոլոր անոնց համար որոնք իրեն կը հնազանդին, քանի Աստուած զինք քահանայապետութեան կոչած էր, Մեկիսեդեկ քահանային պէս:

ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿ Է ՄԵՂԵ:
Մեղք կը նշանակէ յանցանք վնաս: Ճշմարտութեան մը ուրացումը, պատուէրի մը կամ օրէնքի մը հակառակ եղած գործը յանցանք է, մեղք է, իսկ բառին կրօնական իմաստով մեղք կը կոչուին այն բոլոր գործերը, որոնք հակառակ են աստուածային պատգամներու եւ պատուիրանքներու:

ԻՆՉ Է ՄԵՂԵԻՆ ՅԵՏԵՄԱՆԸ:
Երբ մարդ յանցանք մը գործէ, կը պատժուի անոր համար, իսկ երբ վնաս մը պատճառէ, կը հատուցանէ զայն: Ներելի մեղքեր կան եւ աններելի մեղքեր կան:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ



**ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅԻ
ՀԱՅՐԱՊԵՏ**

Հայաստանեայց եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Բարսեղ Հայրապետի տօնը կը զուգահիսի Շաբաթ, 2 Դեկտեմբեր 2018-ին: Ուստի, եկէ՛ք միասնաբար մօտէն ծանօթանալ Հայրապետին:

Բարսեղ Հայրապետ ծնած է 330-ին՝ Կեսարիա: Եղած է քրիստոնէայ պատուական ընտանիքի զաւակ: Ուսանած է Կեսարիա, ապա՝ Պոլիս: Բարձրագոյն ուսումը ստանալէ յետոյ, կը վերադառնայ Կեսարիա եւ ինքզինք կը նուիրէ վանական կեանքի: Որոշ ժամանակ այցելելէ ետք Սուրիոյ եւ Եգիպտոսի վանական շրջանակները եւ Ս. Երկրի սրբավայրերը, վերջնականապէս կը հաստատուի Նէօ-Կեսարիա՝ Նիքսարի շրջակայքը իբրեւ մենակեաց՝ 358-ին: Սարկաւագ կը ձեռնադրուի: Նազիանզացի Գրիգորի հետ կը նուիրուի առաքելական քարոզութեան Պոնտոսի եւ Կասպաղովկիայի գաւառներուն մէջ: Ընդառաջելով իր քաղաքի եպիսկոպոս Եստեփոսի կոչին, 364-ին կը ձգէ իր ճգնարանը պայքարելու համար Արիոսականութեան դէմ՝ իբրեւ օգնական մետրոպոլիտին:

370-ին, երբ Եստեփոսը կը վախճանի, Բարսեղը կը յաջորդէ անոր, իբրեւ Կեսարիոյ արքեպիսկոպոս եւ արդիւնաւոր մեծ գործունէութիւն ցոյց կու տայ: Շատ պայքարներ կ'ունենայ հերետիկոսներու դէմ: Ան բացառիկ կազմակերպչական յատկութեամբ օժտուած, պերճախօս քարոզիչ, հմուտ հոգեւորական էր: Բացի վանքերէն, հաստատած է բազմաթիւ բարեգործական հաստատութիւններ՝ աղքատներու եւ հիւանդներու համար, դպրոցներ եւ որբանոցներ՝ մանուկներու համար:

Իր մատենագրական գործերէն՝ նշանաւոր են իր գրած Ս. Պատարագը, որմէ շատ տարրեր ունի նաեւ մեր Պատարագը, «ՎԵՅՕՐԷՔԸ», որ ստեղծագործութեան վեց օրերու մասին բացատրական ինը ճառեր են: Այս երկու գործերը, ինչպէս նաեւ՝ իր բոլոր գործերը թարգմանուած են հայերէնի, սկսեալ՝ Ոսկեղարէն, շուրջ 60 կտորներ: Ծանօթ են իր մեծ աղօթքները, որոնցմէ ոմանք մինչեւ օրս կը կարդացուին մեր եկեղեցւոյ մէջ՝ մեծ տօներու ընթացքին:

ԱՌԱԿ (6. 10-11)
Եթէ այսպէս քիչ մը քննաս, քիչ մը հանգչիս, քիչ մը մրափես, քիչ մը ձեռքերդ կուրծքիդ ծալլած մնաս, ահա այն ատեն աղքատութիւնը չար ուղեւորի մը նման քեզ պիտի դիմաւորէ եւ չքաւորութիւնը թիր սուրհանդակի մը նման դրանդ առջեւ պիտի կանգնի: Բայց եթէ դուն եւս աշխատասէր ըլլաս, ամառդ աղբիւրի նման քեզ պիտի ողջունէ եւ չքաւորութիւնը չար մարդու մը պէս ինքզինք պիտի հալածէ: